ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- ------ 2020 թվականի №---Ա
քաղ. Երևան

«ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էներգետիկայի մասին» օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվությունները, այլ տեղեկատվությունը և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով,

բ) Հանձնաժողովի 2019 թվականի հոկտեմբերի 9-ի «Էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի լիցենզիա ունեցող անձի ֆինանսական հաշվետվությունների ձևերը սահմանելու մասին» N374Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն՝ էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի լիցենզիա ունեցող անձի կողմից ֆինանսական հաշվետվությունների (այսուհետ՝ Հաշվետվություններ) ներկայացման ժամկետը մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ն է, սակայն «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2019 թվականի արդյունքներով Հաշվետվությունները Հանձնաժողով է ներկայացրել 2020 թվականի ապրիլի 22-ին,

գ) Հանձնաժողովը, Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով, 2020 թվականի մայիսի 11-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 11-ի ԳԲ/34.4-Մ2-1/1677-20 գրությամբ,

դ) Ընկերությունը, հարուցված վարչական վարույթի շրջանակում 2020 թվականի մայիսի 27-ի գրությամբ հայցելով Հանձնաժողովի ներողամտությունը, հայտնել է, որ Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման փաստը պայմանավորված է եղել Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությամբ,

ե) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված ժամկետը: Վարչական վարույթի շրջանակում Ընկերության ներկայացրած հիմնավորման առնչությամբ հարկ է փաստել, որ Հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 26-ի N103Ն որոշմամբ սահմանված՝ էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց կողմից ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգի համաձայն՝ ի թիվս առձեռն եղանակով ներկայացման հնարավորության, Ընկերությունը Հաշվետվությունները Հանձնաժողով կարող էր ներկայացնել նաև փոստային կամ էլեկտրոնային եղանակներով: Հետևաբար, արտակարգ դրությամբ պայմանավորված՝ Հաշվետվությունները Որոշմամբ սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու Ընկերության փաստարկն օբյեկտիվ պատճառ չի կարող համարվել, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2020թ.